

եւ անուան աշխատասիրին եւ ազգին. դիտեմ, մերայինք երկրային առ այնպիսի անակնկալ հարցուածս, այլ աչք դիտնականին այլ լուսով տեսանէ զայնոսիկ, եւ ուր ծածկի այնպիսի ազնիւ դիտաւորութիւն, նա հոգևով չափ ջանայ նպաստամատոյց լինել այնմ: Զսոյն լիուրի յուսարով ի Զերդ Հայրութենէ, ես ո՛չ բնաւ տարակուսեմ, թէ դուք խնայէք յայնմ զվաստակ Զեր, որով յաւիտեան պարտաւորէք զսիրողս Ազգին իմոյ եւ զմտերիմս Զերոյ Հայրութեան

զխոնարհ որդի Զեր

Պաշտուոր Ապովեանն:

1833, Փետրուարի 4, ի Դերպա:

Զայս նամակ դրեցի ի տան նորին իսկ Պրոֆեսորի, որ դրէ զայս յառաջագործութիւն:

¹ Որքան վանք եւ վարժատունք դտանին Հայոց ի Ռուսաստան:
² Որպիսի՞ մակացութիւն ուսուցանին ի վարժատունս, եւ ըստ որո՞ց դրեանց:
³ Որպէ՞ս են կարգադրեալ իւրաքանչիւր դրատունք վանքից, եկեղեցեաց, եւ վարժատանց, եւ ո՞րքան հատոր տպագրեալ գրեանք թուին իւրաքանչիւր դրատունք, եւ վասն որո՞ց առարկայի առաւելապէս գտանին ի նոսա գրեանք են:
⁴ Ունի՞ն այս դրատունք դյունական եւ զլատինական ձեռագիրս, եւ յոր մտաց վերայ, ի վերայ որպիսի՞ թղթոյ, մագաղաթի:
⁵ Որքան ձեռագիրք դոն ի լեզուին Հայոց յիւրաքանչիւր դրատունս, ո՞րք ի նոցանէ են արժանաւոր վասն հնութեան եւ մտաց, ո՞րք ի նոցանէ չեն տպեալք: Ո՞րք ի նոցանէ մանաւանդ են թարգմանութիւնք ի յունական ձեռագրաց որք տեսչին յայտնի:
⁶ Ո՞չ գոն արդեօք գրեանք, որք ճառեցեն զվիճակէ գրականութեան եւ դրատանց Հայոց Ռուսաստանի:

4 Փետրուարի 1833, ի Դերպա:



ԺԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆԻՆՔ

ՍՅԱՄՊՈՒՆՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԵՐԵՄԻԱ ԶԵԼԵՊԻՒ ՔԵՕՍԻՒՐՃԵԱՆ

Գ Լ Ո Ւ Ս Զ.

(Շարունակութիւն):

Յակոբ կաթողիկոսին ճիշդ քովը թաղուած է Նալբան Յակոբ պատրիարքը, որուն տապանագիրը 12 տող երկաթագիր փորագրուած,

թէ եւ քանիցս հրատարակուած է¹, բայց կարեւոր կը համարիմ հոս ալ զետեղել զայն, աւասիկ:

Այս տապան է գերահոգակ առն իմաստնոյ Զրիական շնորհաց հոգւոյն տան եւ տեղւոյ Տեառն Յակոբայ Աստուածաբան կոչեցեալ Սու վեհափառ պատրիարքին Բիւզանդիոյ Որ էր յաջորդ Տեառն Յօսաննու բաղիշեցւոյ Բաջարոզ պատրիարքն գերյարգեալ լեալ հեղինակ բազում գրեանց ազգիւմ մերոյ

Պայծառացաւ յոգնեալստիւք այլըս յարգոյ

Քսաներեք՝ ամօք եկաց դէտ այս Պոլսոյ Տեղեաւ գոլով զիմաստացի բարեբարոյ Այն որ ի կեանս էր ճայն կենաց իբր զփոռոյ Ննջէ լրիկ լեալ արժանի յիշման բարւոյ Հանգեալ ի ՌՄԺԳ թվին յուլիսի Ի: (1764)

Նալբան Յակոբ որու մասին բաւական գրած եմ Ծանօթագրութիւններու Ա. Հատորին 232—234 եւ 250—253 էջերուն մէջ, նշանաւոր պատրիարք մը եղած է. թողած է գրական բազում աշխատութիւններ², նաեւ հեղինակ ըլլալով մեծամեծ բարեգործութիւններու: Անոր սահմանող ազգը լացած է, ինչպէս կ'ուսանինք յօդուածէ մը զոր Սարգիս Գպիր Սարաֆ Յօսաննեան զետեղած է իւր Յիշատակագրութիւններու ձեռագիր տետրակին մէջ, որ այժմ իմ սեպհականութիւնս է: Կարեւոր կը համարեմ որ արտագրել հոս ամբողջովն այդ գրուածը որ Նալբանի յուղարկաւորութիւնը կը պատմեաւասիկ.

«Յամի Տեառն 1764, իսկ յաբեթական տումարի ՌՄԺԳ, յուլիսի ԺԹ. եւ սէֆէր լուսնի 3: Յաւուր երկուշաբթի, որ էր երկրորդում օր վարդավառի՝ սոյն երեկոյիս շուրջ ԺԹ ժամաւ աւանդեաց զհոգին իւր առ այն յորում փափաքէրն եւ ցանկայր ի տեղին երանելեաց Պատրիարքն Կ. Պոլսոյ Յակոբ մեծ վարդապետն Աստուածաբան:

Եւ ի միւս օրն՝ որ էր երեքշաբթի, եւ վարդավառի երրորդում օր շուրջ զերեք ժամաւ Պէյօղլի կոչեցեալ գերեզմանատունն ի դիմահանգրստեան գերեզմանի եղին, հանգերեք

¹ Արեւել, թիւ 2979, 8 յունվար 1894: Բիւզանդիան, թիւ 184, 1897 եւ Բազմաշէպ, 1918, էջ 174:
² Վեբ Հասարոյ, 1733, Բրիտանական, 1737, Մեթ. Նաբիէ, 1745, Հոֆեւահ (տաճար) 1746, Ճեմարտութեան, 1756, Ձիւ հոֆեւոր, 1757, Գանձարան, 1758, Գերեւ Առ թից, 1760 եւ ուրիշներ:

յոգնապաղատ մաղթանօք, եւ սաղմոսանուագ երգածայնութեամբ, առ ընթեր մեծի քահանայապետի դամբարանի՝ Յակոբայ սրբոյ կաթողիկոսի. եւ բազմութիւն անձանց էր խտագոյն կարի բազում յոյժ, թէ վարդապետաց՝ եւ թէ քահանայից, թէ իշխանաց՝ եւ թէ ժողովրդոց, թէ կանանց՝ եւ թէ մանկանց, որք եկեալք էին ի թաղումն երանելոյն, զոր տէր լուսաւորեցցէ զհոգի, եւ հանգուցցէ ի խորանն լուսեղէն, եւ արասցէ դասակից եւ պսակակից ընդ սրբոց հայրապետացն ամէն:

Եւ որոյ օծողն, եւ ի գերեզմանատունն զկարգըն հոգեհանգստին կատարողն՝ էր նուիրակ քաջաբարոզ Յարութիւն վարդապետ Բասենցի:

Եւս զբազմութիւն ժողովրդեան փոքր ինչ անսորացուցանելոյ եւ ցրուելոյ եւ հեռացուցանելոյ աղագաւ, որ առ ընթեր գերեզմանին էին համակուտակեալք, եւ շուրջ զնովաւ համախմբեալք, ի նոյն պահմիւնչեռ կատարել կարգ թաղմանն, հնարս իմացեալ հրաման արար պատրիարքն Գրիգոր, զի զԱռաքօղոս Սարգիս վարդապետն շնորհալի, փոքր ինչ տարակաց ելեալ ի վերայ միոյ բարձրագոյն գերեզմանաբարի՝ սկսաւ մեծաւ հառաչմամբ, եւ սրտաուռչ կերպիւ, արտասուածով աչօք, եւ հեկեկեալ ձայնիւ աւաղել եւ ողբալ զմարդկային բնութեան լրբիւն եւ անկայուն լինելն ի վերայ երկրի, եւ միշտ ի հոսման եւ ի ծորման գոլն ի սկզբանէ մինչեւ ցկատարած. եւ զաշխարհիս ունայնութենէն, եւ զսին սաղարթիւք պաճուճեցեալ զլինելութենէն, եւս եւս յունայն եւ ի նանիր իբր առ աչօք եղեալ զհեշտութենէն՝ զսրովեալ ամբաստանեաց՝ բերելով զօրինակ շահաւետս, եւ զառակս օգտատուս եւ զերաստ: Եւ յետոյ զմիայն գովասանութենէն միանգրն(?) եւ նպատակն, եւ օգտաբեր շահաւետութեան արժանին եւ ընդունելին, այսինքն զաստուածային առաքինութիւնն գովելով գովեաց եւ ներբողեաց, եւ այսու կերպիւ միսթարեաց սիրտեաց եւ զովացուցեալ ապահովացոյց զժողովուրդն սակաւիկ ինչ:

Եւ յաղագս հանգուցելոյն սկսաւ ասել այսպէս,
 Եղբարք իմ սիրելիք. ահա արդ տեսէք մեր մեծապատիւ եւ սիրելի հոգեւոր Սրբազան Հայրն լուսահոգի թէ որպէս վճարեաց զկեանս իւր, եւ զմեզ զամենայնս որբացոյց իրաւի եւ կաթողնեալ միջաբեկս արար: Եւ արդ տեսէք թէ որպէս ակունքն իւր լուսաւորք, զորս ունէրն երէկն եւ եռանդն այժմ դադարեալք են ի տեսանելոյ բերանն ի խօսելոյ, զաստուածային քարո-

զութիւնն վարդապետելոյ՝ եւս յօրհնելոյ զմեզ լուեալ են աւասիկ: Տեսէք եւ այժմ եւ զձեռոսն որ ոչ կարէ վերացուցանել եւ խաչակնքել զձեզ՝ եւ ասել առ ձեզ՝ խաղաղութիւն ընդ ձեզ եւն. եւ ակնջքն ի լսելոյ զՅերմեոանդ աղօթքն ձեր. եւ առ Աստուած մատուցանելոյ (իբրեւ զհրեշ-տակն յուռնելեայ) արդ՝ զրկեալք են ի լսելոյ եւ խցեալք զգալապէս, եւ ոչ որչափ առ Աստուած խցեալք զգալապէս, եւ ինքն իսկ բողոքովմբ զրկեցեալ իմանալարար. եւ ինքն իսկ բողոքովմբ զրկեցեալ է ի համայնից զգայութեանց եւ շարժութեանց, եւ բովանդակ դասուց եկեղեցականաց ի հոգեւոր եւ բովանդակ դասուց եկեղեցականաց ի հոգեւոր եւ պարեգութեանցն, եւս ձեզ նման հոգեւոր եւ սիրելի որդեկացդ ի տեսութենէն հեռացեալ մեկնեցաւ այսօր: Ուրեմն պարտիք եւ դուք վասն նորա առ Աստուածն գորովագութ ընդմեռանդապէս աղօթս մատուցանել, զոր միսթարիչ Հոգին Սուրբ Աստուած զձեզ եւ զմեզ միսթարեաց եւ զհոգի երանելոյ պատրիարքիս այսօրիկ ի լուսեղէն խորանն ընդ սրբոցն իւրոց զմայնցուցցէ տեսութեամբն իւրով:

Եւ վերջապէս իւրաքանչիւրքն գնացին ի բնակութիւնս իւրեանց աւաղելով եւ կոծելով զանձինս իւրեանց՝ զի զրկեալ գտանեցան յայնժամ, յայնպիսի Հոգեւոր Հօրէ, ըստ տեսան աւսից եւ քաջ հովուէ ի ուղղախօս վարդապետէ, եւ նրբամիտ իսկ քարոզէն:

Որչափ որ ալ զուրկ են սոյն տղերը գրական եւ իմաստասիրական բարձր գաղափարներէ, այնու հանդերձ ցոյց կու տան թէ որ աստիճան սիրուած եւ յարգուած պատրիարք մը եղած է Յակոբ Նալբան:

Աշակերտ Վոլոտ Յովհաննէս մեծանուն պատրիարքին, անոր մահուանէն անմիջապէս յետոյ յաջորդը եղած է. ինչպէս կ'աւանդէ Սարգիս Գպիր Սարաֆ Յովհաննէսեան գրելով՝ «Բարեկիշատակ Բաղիշեցի երանելի Յօսաննէս պատրիարք Կ. Պոլսոյ բազմաշակերտ ննջեաց ի ՌՃՂ, փետրվարի ԺԳ. զոր թաղեցին ի Սուրբ Լուսաւորչի եկեղեցին զալաթիոյ որ ի հիւսիսա-կողմն անկանի մեծի քաղաքին Կ. Պոլսոյ: Յետ որոյ յԱթոռն իւր աշակերտ Յակոբ Աստուածաբան վարդապետ տեղակալեաց, որ էր Զիմառացի Նալբան կոչեցեալն»:
 Նալբան երկուանգամ Կ. Պոլսոյ պատրիարք եղած է, անգամ մ'ալ երուսաղէմի: Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը առաջին անգամ տեւած է պատրիարքութիւնը առաջին անգամ տեւած է 8 տարի, 1741 փետրվար 15 էն մինչեւ 1749

մարտ 26, որ ատեն Սիրիստրեցի Պրոխորոն անուն վարդապետը խարդաւանօք կը յափշտակէ Աթոռը եւ 6 օր միայն պատրիարքութիւն ընելէ վերջը կը վտարուի Կ. Պոլսէն, ինչպէս գրած եմ արդէն Ա. Հատորիս 250—252 էջերուն մէջ:

Այդ միջոցին է որ Նալեան Երուսաղէմի պատրիարք կը նշանակուի, իբր յաջորդ հանգուցեալ Գրիգոր Շղթայակիր անուանի պատրիարքին, եւ կը պաշտօնավարէ մինչեւ 1751:

1752ին երբ մեծանուն Եաղուպ աղայ ազգեցեակ Հայր¹ Երուսաղէմ կ'երթայ, վերագարծին հետը Կ. Պոլիս կը բերէ Նալեանը, եւ զայն նորէն պատրիարք կարգել կու տայ, նոյն տարուոյ մայիս 16ին:

Այս անգամ Նալեան ճիշդ 12 տարի մեծ իմաստութեամբ կը վարէ պատրիարքական պաշտօնը եւ 1764ին ծանրապէս հիւանդ, կը թողու Աթոռը իւր կամքով եւ հանդիսաւոր ժողովով իրեն յաջորդ կ'որոշէ Գրիգոր վարդապետ Պասմաճեանը, զոր նշանակած եմ արդէն Ծանօթագրութիւններուս Ա. Հատորին 254—255 էջերուն մէջ:

Նալեան Յակոբ պատրիարքի մասին գրողներ

¹ Այս Հայրը գլխատուած է 1752 յուլիս 9ին. այս մասին Սարգիս Գպիր Սարաֆ Յոհաննէսեան իւր Ժամանակագրութիւններու շարքին կը գրէ՝

«Ի թուին Հայոց ՌՄԱ (1201+551=1752) յուլիս Թ. Եաղուպ աղայն զլուստեցին ի Կ. Պոլիս վեզիր խանին առջեւն»:

Սոյն տողերուն հետ Սարգիս Գպիր կը պատմէ ուրիշ Հայու մը նահատակութիւնն ալ, զոր կարեւոր կը համարիմ նոյնութեամբ գրել հոս.

«Յամի Տեառն 1763: Հայոց ՌՄԺԲ մարտի 27, եղև մեռեալ Ռահիպ փաշայն, որ էր երկրորդ Սուլթան Մուստաֆա թագաւորին՝ յայնմ ժամանակի էշլուղին, որ ռայէից (քրիստոնէայ) էր ինմամբու ռահիպն եւ պահպանիչ ի վտանգաց, եւ մանաւանդ ազգիս մերոյ գլխովին, որոյ աստարութեամբն նորոգեցաւ Աստուածածնայ եկեղեցին ձեռամբ պատրիարք Յակոբայ Աստուածարանի»:

Յետ աւուրց երկը մեռանելոյն՝ կալան ի կալանս զպաղերկեան պաշէրն (այսինքն գործակատարներն կամ սեղանաւորները, որոնք միշտ Հայեր էին). սոյն վեզիրիս՝ զՊետրոսն փափազ օղոււն, զՂազար աղայն, զԱբրահամն խոյ լիւն օղոււն, եւ զՊաղտասարն նալպանտ օղու կոչեցեալն. տարան ի նեղութեան դուռն Պոստամնճի պաշուստ առ ի շարշարել եւ շարշարելին:

Յամի վերոյգրեցելոյ մայիս ամսոյ ԻԳ յաւուր ջը. գիշերոյ շուրջ զվեց ժամաւ՝ ի Չուխաճի Գրան գէմն զՂազար ամիրայն կախեցին եւ սակայն մնացին ի Պոստամնճու պաշուստ անձկութեան բանսն 56 օր կրելով զբազմազան շարշարանս. սակս թէ մէր է ստացեալ ստացուածքն ձեր. եւ նոքա ներ նեղութեան ասացեալ էին զտեղիսն յընչից իւրեանց, եւ յետ առնելոյն զեւս գին վճռեալ էին թէ այսքան եւս պարտիք տալ, եւ ազատեալք եղեն Երեքեանն, եւ յետ այսորիկ կախեցին զՂազարն, վասն փոքր ինչ լեզուագրութեանն, զոր արարեալն էր ի դէմս թագաւորին վասն շիրաւագատութեանն իւրոյն:

շատ եղած են՝ ինչպէս Չամչեան, Գրիգոր պատրիարք Պասմաճեան, Սարգիս Գպիր Սարաֆ Յովհաննէան, Բարզէն եպ. Կիւլէսերան, Ալրաճամ Այվազեան («Արեւելք», գեկտ. 1893) եւ ուրիշներ, որոնց բոլորն ալ յիշած եմ Ա. Հատորիս վերոյիշեալ տեղերը:

* * *

Հոգեւոր Տիրոջ եւ Նալեան պատրիարքի շուրջը թաղուած են վերոյիշածս եկեղեցականները, որոնց տապանագիրներն են՝

Այս է տապան հանգստեան՝ Մեղրցի Մարտիրոս Աստուածաբան վարդապետին որ էր նուիրակ սուրբ Էջմիա ծնի՝ որ հանգեալ ի Բրիստոս թուով ՌՃԿ եւ Զ. ի. Հայր մեր (1166 + 551 = 1717):

Այս է տապան հանգստեան ի քաղաքն Կեսարացի ի գիւղէն՝ Սիչեացի՝ հանգուցեալ, զիւմ՝ պիւլ խալիֆայի որդի յորաննէս եւ Օհաննէսի որդի Յովսէփ Աստուածաբան արճիեպիսկոպոսի, Երուսաղէմայ մշակ հարազատ եւ երախտաւոր նրվիրակ՝ եւ առաջնորդ ի քաղաքն թօխաթու, թրվին ՌՄԺԹին: (1219 + 551 = 1770):

Այս է տապան հանգստեան Դանիէլ պատրիարքի վէքիլ Նրարում՝ ցի լուսահոգի կարապետ վարդապետին հանգեալ ի Բրիստոս թվին ՌՄԺԱ յունվար Ե. (1251 + 551 = 1802):

Կան գեռ շատ ուրիշ եկեղեցականներ որոնց բոլորին տապանագիրները եթէ ժողովելու ըլլանք կրնան կարեւոր հատոր մը կազմել: Այդ հոգը կը թողում որ ստանձնէ եւ կատարէ այն բանասերը, որ «Հնասեր» համեստ անունով ծածկուած, սկսած էր այս գերեզմանատունին մէջ հանգչող եկեղեցականներուն եւ ոչ-եկեղեցականներուն տապանագիրները հրատարակել («Բիւզանդիոն», թիւ 184, 1897), եւ կը հրատարակէ «Կոչնակ»ի (1927) եւ «Բազմապէս»ի (1929) մէջ:

Բայց կարեւոր կը համարիմ յիշել, թէ

բազմերախտ պատմագիր Հ. Միքայէլ Չամչեանն ալ թաղուած է այս գերեզմանատունը, ինչպէս նաեւ անոր եղբայր Յակոբոս Չամչեան, որոնց մասին ահա թէ ինչ կը գրէ Հ. Մատթէոս Ա. Մաղաբ-Թէոփիլեանց իւր «Կենսագրութիւն Երեւելի Արամնց» երկասիրութեանը մէջ:

«Յակոբոս Չամչեան, վարդապետ Մխիթարեան, ի խոր ծերութեան յամին 1805 փոխեցաւ առ Աստուած ի հասակի 81 ամաց, եւ թաղեցաւ ի գերեզմանատունն Բերայի, ի հողն տանն Չամչեանց, հանդերձ տապանագրաւ: Եւ յետ ամաց ինչ (1823), առ նովաւ թաղեցաւ եւ եղբայր նորա Միքայէլ վարդապետն»:

Հ. Յակոբոս որ Վենետիկի Մխիթարեան վանքին առաջին Օրացոյցը հրատարակողը եղած է 1757ին, ունի իւր տապանագիրը՝ որ 17 տղէ կը բաղկանայ եւ է այսպէս՝

Հայր Յակոբոս Մխիթարեան
Վարդապետ մեծ տանն Չամչեան,
Ազնի ողկոյզ իմաստութեան
Ի ծոյլ հատից ըզգաստութեան:
Ոսկիափայլ փող յոքելեան
Բանին կենաց ճշմարտութեան.
Համբերատար աշխատութեան:
Հոգնավաստակ արիւթեան:
Սա հեղինակ օրագրութեան,
Ազգիս մերոյ Ասքանագեան:
Քաջ չափաքեր երկնից շարժման,
Տումարագէտ ըսողիկեան,
Ութսուն եւ մէկ ամ՝ լիութեան
Ծաղկեալ յիւրում կենդանութեան:
Փոխի յաստեաց յերկնից կայան,
Ծնեալ ի լոյս արքայութեան:

Յամի Տեառն 1805 ի օգոստոսի 19²:
Վենետիկի վանքի Միաբաններէն մէկուն քով ատենօք կը յիշեմ տեսած ըլլալ ձեռագիր տետրակ մը, որուն մէջ գրուած էր թէ Հ. Միքայէլ յուղարկաւորութեան օրը Պերայի մէջ կարգ մը տգեղ ցոյցեր ըրած են հակակաթիլիկ Հայերու կողմէ վարձուած սիկարեաններ, բայց շուտով խափանուած է այդ ամօթալի արարքը, եւ ժողովուրդը մեծ յարգանքով տարած է այդ մեծ պատմագիրը իւր վերջին քնարանը:

¹ Կենսագրութեան երեւելի Արամնց, Հ. Մատ. Ա.: Մաղաբ-Թէոփիլեանց, Վենետիկ, 1839, Հատոր Ա. էջ 821:
² Այս տապանագիրը հրատարակեց պ. Հնասերը, Բազմապէսի մէջ, էջ 46, 1929:

Այս գերեզմանատունին մէջ երեւելի Հայեր եւ ամիրաներ եւս կան թաղուած, որոնց տապանագիրները մեծ — մեծագոյն մասամբ անհետ եղած են կամ հողին մէջ խրուած — կորսուած. դուրսը մնացածներէն մասնաւորապէս հաւարած եմ ես այն տապանագիրները, որոնք ենթակային ինչ հիւանդութենէ մեռած ըլլալը կը յայտնեն:

Այս հաւաքածոներս պիտի կազմեն իմ «Ախտացոյց Տապանագիրներ» անուն աշխատութիւնս:

Այս գերեզմանատունին մէջ մեծ գոլէրայի համաձարակի ատենէն, այսինքն 1865էն սկսած թաղում տեղի է ունեցած: Վերջին ննջեցեալները երկու Սերաստացիներ են՝ Ոսկեան Մակարեան (+ 19 յուլիս 1865) եւ Թագէտս Առաքելեան (+ 21 յուլիս 1865) երկուքն ալ զոհ գոլէրայի, որոնք ունին համանման տապանագիրներ սապէս,

Մականվամբ Մակարեան
ծնեալ ի Սէփաստիս
եւ զարգացեալ
ի ծոց լուսավորչական
Սուրբ եկեղեցոյ
պատանի ընտիր եւ ուշիմ
քսան եւ երկու ամեա ելիք զաշխարհ
ճարակ եղեալ
անգութ ախտին գօլէրայ
ի սուգ ծնողաց եւ եղբարց
19 յուլիս 1865

Աստ հանքի
Թաթէոս Ստեփանեան
Մականվամբ Առաքելեան
ի Սէփաստիս
ծնեալ եւ զարգացեալ
ի ծոց լուսավորչական
Սուրբ եկեղեցոյ
տապանի՝ ընտիր եւ ուշիմ
19 ամեայ ելիք զաշխարհ
ճարակ եղեալ
անգութ ախտին քօլէրայ
ի սուգ ծնողաց եւ եղբարց
21 յուլիս 1865

Երկու շիրիմներուն վրայ ալ բոլորագիր փորագրուած են սոյն 13 տողերը. իրենց վերեւը երկուքն ալ ունին խաչ մը դափնեպսակի մէջ անուած, պսակին ներքեւ ալ՝ «Լ» գիրը:

* * *

¹ Կարգաւ պարտէ:

Գերեզմանատունն ժամանակաւ անխոր բոլոր Հայերու վերջին քնարանն էր, բայց հետ- զհետէ կրօնական տխուր վէճեր՝ որոնց մասին գրած եմ այս աշխատութեանս Ա. Հատորին մէջ (էջ 256—258), գծտուծիւն առթած են, եւ այդ պատճառաւ Հայ-կաթովիկ հասարակու- թիւնը իրեն յատուկ առանձին գերեզմանատուն ունեցած է, մինչեւ անգամ իրեն պատկանող շատ մը ննջեցեալներու ալ ոսկերոտիքը հանած տարած է, հետը փոխադրելով անոնց շիրմա- քարերը, որոնցմէ մեծ մաս մը զետեղուած կը մնան այժմ Բանկայթիի Ս. Յակոբայ Հիւան- դանոցին պարտէզը:

Տարիներ յետոյ սակայն, այս գերեզմա- նատունը կուռահանձոր եղած է. իր լայնածաւալ ընդարձակութիւնը, աչքառու դիրքը, ըսենք նաեւ լքեալ-անխնամ վիճակը, անորժակներ գրգռած են, մանաւանդ Բանկայթիի թաղին տակաւ զարգացումը թշնամի եղած է անոր գոյութեանը, որով 1856ին Տաճկի կառավա- րութիւնը ուզած է ձեռք դնել անոր վրայ եւ հազիւ Ազգային իշխանութիւնը՝ Հոգեւոր եւ գերագոյն ժողովներ կրցած են սպառնացող վտանգին առաջին առնել: Անմիջապէս զայն ամբողջովին որմնափակել տուած են, մուտքի դրան վերեւ ալ զետեղելով հետեւեալ Ար- ձանագրութիւնը,

Ողորմութեամբն Աստուծոյ եւ քարծրագոյն հրամանաւ քարեգութ ինքնակալին մերոյ Սուլթան Ապտիւլ Մէճիտ խան Աեհափառ արքային Օսմանեանց Որմնափակ պատուարեցաւ սրբավայր կալուածս լուսաւորչական Սուրբ Աթոռոյն Հարազատ Հայազգի ժողովրդեան Արդեամբք Ազգիս ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ներսէսի Սրբազան կա- թողիկոսի եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Տեառն Յակոբայ Արքեպիսկոպոսի 1856 = ՌՅԵ:

Այս Յիշատակարանը՝ զոր այն ատեն շա- րագրած է բժիշկ Գևտ. Ստեփան Ապրանեան (Փաշա) երբ Պերայի եկեղեցւոյն էր, եւ զոր հրատարակած եմ 1905ին¹, իր տեղէն վեր- ցուած է այժմ եւ կը պահուի Ս. Լուսաւորիչ եկեղեցին:

Այս Ս. Լուսաւորիչ եկեղեցին շինուած

¹ Հանդէս Եւրոպայ, 1905, մայիս, էջ 146:

է գերեզմանատունին հարաւակողմը: Գողերայէ մեռնողներուն մարմինները մինչեւ իրենց թա- ղուիլը, հոն առժամեայ կերպով պահուելու համար՝ իրրեւ մոռելատուն կառուցուած է այն նախապէս 1865ին եւ այս փոխուած է եկեղեցիի եւ կանգուն կը մնայ ցարդ միշտ փայ- տաշէն, առանց արձանագրութեան:

Այս եկեղեցիին Արեւելեան կողմը թա- ղուած են օտարազգի քրիստոնեաներ եւ վրացի եկեղեցականներ, որոնց գերեզմանաքարերը կը մնան դեռ:

Ասոնց մօտերը կը գտնուի շիրմը նշանաւոր բժիշկ Բէստէն Միքայէլի Հօր, Տէր Պետրոս Բահանային (Պատկանեան), որ ունի հետեւեալ տապանագիրը,

Յայս տապան ղնի՝ այր ականաւոր Աւագ Տէր Պետրոս տեսլեամբ՝ փառաւոր Փառացն Աստուծոյ միշտ նախանձաւոր ժիր պաշտօնատէր, հսկող հոգեւոր, Բաժանորդ կենաց համեստ իւր Տիկին Յայս անձուկ շիրմի՝ ղընի ընդ նմին, Ոյք էին կցորդ կենաց իրերաց՝ Աստ տաղավարին միաբան սիրով Աստէն կան մընան յարութեան յուսով: Չեր հասարակաց մաղթանք առ Աստուած Սոցին է վերջին անբարբառ հայցուած:

Այս տապանագիրը հրատարակած եմ արդէն Բէստէն բժիշկին կենսագրութեանը մէջ՝ եւ խօսած նաեւ Տէր Պետրոսի մասին, որ երեւելի քահանայ մը եղած է, Գաւիթ-Գանիէլեան կա- թողիկոսական կուիւններու միջոցին հաշտարարի մեծ դերը կատարելով:

* * *

Գերեզմանատունը ապագայ վտանգներէ զերծ պահելու եւ զայն Ազգին ձեռքէն չհա- նելու իրրեւ միջոց նկատուեցաւ Ս. Լուսաւորչի այս եկեղեցին, որուն յղացումը Ազգը կը պարտի երեք ականաւոր բժիշկներու՝ Ստեփան Փաշա Ապրանեանի, Գևտ. Սերվիէլի, եւ Գևտ. Բա- րունակ պէլի:

Ասոնք գողերայի տարին՝ համաձայնակին համար գումարուած կայս. բժշկական խոր- հուրդին անդամ ըլլալով, յաջողած են կառա- վարութենէն արտօնութիւն առնել, եւ շինել տուած են գերեզմանատունին մէջ մոռելները պահելու տնակ մը, որ հետզհետէ ընդարձա-

Հանդէս Եւրոպայ, 1901, մարտ, էջ 366:

կուելով եղած է արդի եկեղեցին եւ որուն քովիկն ալ տարիներ վերջը կառուցուած է Մանկապար- տէզ մը Ս. Լուսաւորչեան անունով, ուր կը յա- ճախեն Բանկայթիի Հայ ընտանիքներու երկսեռ զաւակները:

Այսու հանդերձ՝ կառավարութիւնը միշտ աչք տնկած է անոր. 1872ին ուղած է զայն գրաւել, եւ այն ատենն էր, որ Հայ եկեղեցական դասէն խուսք մը եպիսկոպոսներ՝ գլխաւորու- թեամբ Թրակիոյ առաջնորդ Թադևոս եպիսկո- պոսին, Ուրբաթ օր մը Սելամըքի արարողութեան պահուն կրցան ազգու աղերսագիր մը ուղարկի Սուլթան Ապտիւլ-Եղիզի ձեռքը տալ ու փրկել գերեզմանատունը:

Թադէոս եպիսկոպոսին այս համարձակ գործունէութիւնը մեծ գովեստով յիշատակուած է, ու անոր շիրմաքարին վրայ իսկ քանդակուած (տես Ծանօթագրութիւններուս Ա. Հատորը, էջ 328):

Բայց 1876ին վերստին ինքրոյ առարկայ կը ըլլայ այս մահաբաղաբը եւ Ազգ. ժողովին մէջ կը յարուցանէ բաւական վիճաբանութիւն- ներ, ու բարեբաղդաբար դարձեալ կը մնայ այն սեպհականութիւն Ազգին¹:

Կառավարական օտնձգութիւններէն հազիւ թէ փրկուած էր այն, եւ ահա ազգասէր անունը կրող մէկ երկու շահամոլ Հայեր, գաղտնաբար, առանց Ազգային իշխանութեան տեղեկութիւն տալու, կ'ըլլեն դիմում կ'ընեն Աստիական Տէրութեան, որ յարմար եւ աչքառու տեղ մը կը փնտռէր դեռսպանատուն շինելու, եւ ի վա- ճառ կը հանեն գերեզմանատունը. բայց կարեւոր եւ ճշմարտապէս ազգասէր ուրիշ Հայերու ազդե- ցութեամբ այդ ծրագիրը չ'իրականանար:

1875—1876 Գարակէօղեան եղբայրները կ'ուզեն հոն վաճառականական դպրոց մը կանգ- նել, բայց այդ խորհուրդն ալ կը մատնուի անյա- ջողութեանց:

Եւ այսպէս գերեզմանատունը կը մնար Ազգին, երբ 1912ին Ժէօն-Թիւրք կառավարու- թիւնը Բանկայթիի պողոտայն լայնցնելու համար, պահանջեց որ գերեզմանատունէն մաս մը ան- պատճառ կտրուի, խոտտանալով կտրուելիք բաժ- նին մէջ գտնուած ոսկերոտիքը խնամով հանել, վերստին թաղել այլուր, ու թողուած հողին փոխարէն ալ գրամական հատուցում ընել:

¹ Ստեփան-Ռիւնդ Աւագին խորհուրդ, 7 մայիս 1876, էջ 5 եւ Արտ. պատկերագրող Հանդէս Սիմոն Բուլ- մբեանցի, Ս. Պետրոս, 1887, Գիրք Ա., էջ 53-55, յօդուած Ծիւղեր ստորագրութեամբ:

Ազգային իշխանութիւնը առ այս՝ դիմեց Էջմիածին եւ ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ ստացած հրամանին համաձայն, գերեզմա- նատունէն ուղղուած մասը տուաւ կառավարու- թեան, բայց նախապէս խնամով հանուեցան ըրողը ոսկերոտիքը ու հանդիսաւոր արա- ըրողութեամբ նորէն ամփոփուեցան, Հոգեւոր փո- լով հանգստարանէն քիչ հեռու, 6 մարտ 1912ին:

Ազգը այդ կորուստ բաւական ընդարձակ հողամասին փոխարէն կառավարութենէն ստա- ցաւ 10.000 օսմանեան ոսկի:

* * *

Երեմիա Չէլէպի իւր հիւր վարդապետը այս գերեզմանատունը առաջնորդելէ յետոյ, զայն աւելի անդին չի տանիր եւ իրաւամբ, զի ամաշի տեղեր էին, տուն, բնակութիւն բնաւ չկար այն ատենները, բայց ես կ'ուզեմ դիտել, այն ատենները, կարեւոր հաստատու- կարգ մը Ազգային կարեւոր հաստատու- թիւններ, որոնք անբաժան մաս կը կազմեն թիւններ, որոնք անբաժան մաս կը կազմեն այսօր Պերայի մէջ եղածներուն, եւ կը տա- րածուին Բանկայթիէն մինչեւ Շիշլի:

Բանկայթիի գերեզմանատունին դրանը ճիշդ ու ճիշդ դէմը կայ Ս. Յակոբայ Հիւան- ղանոցը, որ 1832ի համաձայնակի միջոցին, նախ իրրեւ Տաղաւար-ժանտախտաւորներու շե- նուած է եւ այս վար տանուելով՝ տեղը կա- ուցցուած է արդի շէնքը՝ 1836ին:

Անոր մուտքի առաջին դրան վերեւ կը կարդացուի՝ «Անկեղանոց կաթողիկէ Հայոց Գրութիւնը, իսկ երկրորդ ներքին դրան ճակատը հետեւեալ Արձանագրութիւնը.

Հիւանդանոց Հայոց Ուղղափառաց Յանուն Սրբոյն Յակոբայ Մծքնայ Հայրապետին սկսեալ յամին 1836 օգոստ. 1 Աւարտեալ 1837 օգոստ. 1

Ոչ այնչափ մեծ, բայց կոկիկ եւ լաւ մատակարարուած Հիւանդանոց մ'է այս, որուն ընդարձակ պատմութիւնը մանրա՝սան կ'ըրպով 1915ին հրատարակեց Օրթագիւղի Անտոնեան Միաբանութիւնէն Հ. Սահակ Սրապեան: Այս հրատարակութեան մէջ հեղինակը (այժմ հանգուցեալ) մեծ աշխատութեամբ

Ս. Յակոբ Աւագի Հիւանդանոց վիճակ, 1915

